

**ՆՈՐ ԽԱՉԱԿԱՊԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է
ՄՐՑՈՒՅԹ՝
ՆՈՐ ԽԱՉԱԿԱՊԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄՈՒՄ
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎՅԱԼ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ
ՀԱՄԱՐ**

ՆՈՐ ԽԱՉԱԿԱՊԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՌԱՋԱՏԱՐ
ՄԱՍՆԱԳԵՏ (ծածկագիր՝ 3.1-1):

Առաջատար մասնագետը քարտուղարի հանձնարարությամբ՝
կատարում է քարտուղարի հանձնարարությունները՝ ժամանակին և պատշաճ
որակով.

կազմում է համայնքի բյուջեի նախագիծը, դրանում առաջարկվող
փոփոխությունները.

կազմակերպում է ավագանու նիստերին ներկայացվող իր ոլորտի հետ կապված
հարցերի նախագծերի նախապատրաստումը.

ներկայացում է համայնքի բյուջեի կատարման վերաբերյալ եռամսյա
հաղորդումների և տարեկան հաշվետվությունների նախագծեր:

Առաջատար մասնագետն ունի այլ իրավունքներ ու պարտականություններ՝
համաձայն պաշտոնի անձնագրի:

Առաջատար մասնագետի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար
պահանջվում է ունենալ՝

առնվազն միջնակարգ կրթություն՝ առանց աշխատանքային ստաժի և փորձի.

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, «Համայնքային
ծառայության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Հայաստանի
Հանրապետության բյուջետային համակարգի մասին», «Գանձապետական
համակարգի մասին», «Նորմատիվ իրավական ակտերի մասին», «Հաշվապահական
հաշվառման մասին», «Պարտադիր սոցիալական վճարումների մասին»,
«Ֆինանսական համահարթեցման մասին», «Տեղական տուրքերի և վճարների
մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների, աշխատակազմի
կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի
անհրաժեշտ իմացություն, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու, համակարգչով
և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

Մրցույթին մասնակցելու համար դիմողները պետք է ներկայացնեն հետևյալ
փաստաթղթերը.

ա) գրավոր դիմում (տրվում է հանձնաժողովի անունով),

բ) համայնքային ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով այդ պաշտոնն
զբաղեցնելու համար քաղաքացու մասնագիտական գիտելիքների և աշխատանքային
ունակությունների տիրապետմանը ներկայացվող պահանջների բավարարումը
հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմի (ների), վկայականի (ների), աշխատանքային
գրքույկի (վերջինիս բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք
համապատասխան մարմնից) պատճենները՝ բնօրինակների հետ միասին,

գ) հայտարարություն այն մասին, որ ինքը չի տատապում Հայաստանի
Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 15-ի թիվ 98-Ն
որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով,

դ) հայտարարություն այն մասին, որը ինքը դատական կարգով չի ճանաչվել անգործունակ կամ սահմանափակ գործունակ,

ե) «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի «ե» կետի պահանջը բավարարելու նպատակով արական սեռի անձինք ներկայացնում են նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր և զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենները կամ համապատասխան տեղեկանք,

զ) մեկ լուսանկար (3x4 չափսի),

է) անձնագրի պատճենը:

Մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը ներկայացնել անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող փաստաթղթով: Փաստաթղթերն ընդունվում են Նոր Խաչակապի համայնքապետարանում և Լոռու մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչությունում, ամեն օր, ժամը 10-ից մինչև 15-ը՝ բացի շաբաթ, կիրակի օրերից:

Ներկայացվող փաստաթղթերի պատճենների հետ միասին անհրաժեշտ է ներկայացնել նաև դրանց բնօրինակները: Ներկայացրած փաստաթղթերի պատճենները ետ չեն վերադարձվում:

Մրցույթին մասնակցել ցանկացողները լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագրին և հարցաշարին ծանոթանալու համար կարող են դիմել Նոր Խաչակապի համայնքապետարանի աշխատակազմ (գ.Նոր Խաչակապ, հեռ.՝ 094-88-82-24) և Լոռու մարզպետարանի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչություն (Վանաձոր, Հայքի հրապարակ 1, 1-ին հարկ, հեռ.՝ 0322-2-21-04):

Մրցույթը կկայանա 2020թ. նոյեմբերի 13-ին ժամը 11.00-ին՝ Նոր Խաչակապի համայնքապետարանում:

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է 2020թ. հոկտեմբերի 29-ը: